

МЕНЕДЖМЕНТ

**Աշխատաբնի շուկայի կարգավորման
առանձնահատկությունները միջազգային պրակտիկայում**

Կիրակոսյան Էրիկա Կ.

ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի ասպիրանտ (Երևան, ՀՀ)

erika.kirakosyan96@mail.ru

ՀՏԳ՝ 331.5.024.5; EDN: MVMOFD; JEL: E24, J64, I32, P36

Հանգուցաբառեր՝ գործազրկություն, աղքատություն, միջազգային փորձ, կրթական մակարդակ, զարգացման ռազմավարություն, տնտեսական վերելք

Особенности регулирования рынка труда в международной практике

Киракосян Эрика К.

Аспирант кафедры Менеджмента АГЭУ (Ереван, РА)

erika.kirakosyan96@mail.ru

Аннотация. В целом уровень жизни населения выражается через определенные показатели, среди которых потребности семьи, реальные доходы и личное потребление, социально-психологическая удовлетворенность и, пожалуй, самое главное, уровень бедности. Проблема безработицы связана с уровнем бедности в стране. По мнению многих экономистов, безработица является основной причиной роста уровня бедности. В результате высокого уровня бедности и безработицы в стране наблюдается ослабление национальной безопасности, ухудшение демографической ситуации и качества жизни, эмиграция, достигающая все возрастающих темпов, рост социальной разобщенности в обществе и др. . Изучение международного опыта преодоления бедности и безработицы доказывает, что не только избыточное количество финансовых ресурсов способно снизить уровень бедности и безработицы в странах. Разработанная государством эффективная социальная политика, которая будет основываться на особенностях социально-экономического развития стран, сможет смягчить негативные последствия этих двух явлений и способствовать снижению их уровня. В статье приведен опыт преодоления бедности в странах, более или менее схожих с Республикой Армения по своей экономике, являющихся развивающимися странами и, возможно, сопоставимых с экономикой Армении.

Ключевые слова: безработица, бедность, мировой опыт, уровень образования, стратегия развития, экономический подъем

Features of labor market regulation in international practice

Kirakosian Erika K.

Postgraduate student of the Department of Management ASUE (Yerevan, RA)

erika.kirakosyan96@mail.ru

Abstract. In general, the standard of living of the population is expressed through certain indicators, among which are the demands of families, real income and personal consumption, socio-psychological satisfaction, and, perhaps most importantly, the level of poverty. The problem of unemployment is related to the level of poverty in the country. According to many economists, unemployment is the main reason for the increase in the level of poverty. As a result of high levels of poverty and unemployment, the country experiences a weakening of national security, a deterioration of the demographic situation and the quality of life, an emigration that reaches a worsening rate, an increase in social disunity in the society, etc. The study of the international experience of overcoming poverty and unemployment proves that it is not only an excessive amount of financial resources that can reduce the levels of poverty and unemployment in countries. The effective social policy developed by the state, which will be based on the characteristics of the socio-economic development of the countries, can mitigate the negative effects of these two phenomena and contribute to reducing their levels. The article includes the experience of overcoming poverty in countries that are more or less similar to the Republic of Armenia in terms of their economy, are developing countries and are perhaps comparable to the economy of Armenia.

Keywords: unemployment, poverty, international experience, educational level, development strategy, economic rise

Ներածություն: Աղքատության և գործազրկության առաջացման պատճառները դարեր շարունակ եղել են բազմաթիվ տնտեսագետների ուսումնասիրության կենտրոնում: Բայց նրանցից ոչ մեկին չի հաջողվել տալ այս երևույթների վերացմանն ուղղված ինչ-որ մեխանիզմ, որը նույնական կլինի բոլոր երկրների տնտեսությունների համար:

Թեման արդիական է այնքանով, որ այս երկու ցուցանիշների նվազագույն մակարդակից է կախված երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը, ինչպես նաև անվտանգությունն ու առաջընթացը: Աղքատության և գործազրկության բարձր մակարդակների հետևանքով երկիրն ունենում է ազգային անվտանգության թուլացում, ժողովրդագրական իրավիճակի և

կյանքի որակի վատթարացում, ահագնացող տեմպերի հասնող արտագաղթ, հասարակությունում սոցիալական անհամերաշխության ան և այլն:

Հետազոտության մեթոդաբանություն:

Հետազոտությունն առավել ամբողջական դարձնելու նպատակով կիրառվել են համեմատության, վերլուծության մեթոդները: Հոդվածի համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել թե՛ տեղական, թե՛ միջազգային տարբեր հեղինակների կողմից մշակված աշխատություններ, գիտական հոդվածներ, հաշվետվությունները:

Վերլուծություն:

Աղքատության հաղթահարման միջազգային փորձն ուսումնասիրելիս հարկ է կենտրոնանալ այնպիսի երկրների՝ աղքատության հաղթահարման փորձի վրա, որոնք իրենց տնտեսությամբ քիչ թե շատ նման են Հայաստանի Հանրապետությանը, զարգացող երկրներ են և թերևս համադրելի են ՀՀ-ի տնտեսությանը:

Սկսենք Բանգլադեշից, որի փորձը տալիս է շատ հարցերի պատասխաններ:

Ոչ վաղ անցյալում Բանգլադեշը համարվում էր աշխարհի ամենաաղքատ երկրներից մեկը: Մինչդեռ այսօր այն դասվում է միջինից ցածր եկամուտներ ունեցող երկրների շարքին: Ի շնորհիվ առավելապես նորարարությունների ներդրման, Բանգլադեշի կառավարությանը հաջողվեց կրճատել աղքատության մակարդակը ներկայիս սերնդի կտրվածքով:

Առաջընթացի արդյունքները տեսանելի են բոլորին: Նորարարական տեխնոլոգիաների կիրառումը, ինչպիսիք են արևային էներգիայի օգտագործումը, ժամանակակից գործարանների շահագործումը, ինչպես նաև աղքատ բնակավայրերի բնակչության ուղղորդումը Դաքքա՝ այդ գործարաններում աշխատանքի տեղավորելու նպատակով, եղան Բանգլադեշի տնտեսության առաջընթացի գլխավոր նախապայմանները:

Ընդամանը երկու տասնամյակում Բանգլադեշի 20 միլիոն բնակչի հաջողվեց հաղթահարել աղքատությունը: 1991 թվականի 44.2 % աղքատության մակարդակի ցուցանիշը 2010 թվականին կազմեց ընդամենը 18.5%: Համաշխարհային Բանկի տվյալներով 2015 թվականին այս ցուցանիշը Բանգլադեշում ընդամենը 13.8% է եղել: Այս ժամանակահատվածում աշխատող կանանց քանակն ավելացավ 2 անգամ, իսկ ծնելիության ցուցանիշն անկում ապրեց՝ նվազելով 6.2 երեխայից 2.2 երեխայի 1 կնոջ հաշվով: 1990 թվականից մինչև 2013 թվականն ընկած ժամանակահատվածում մինչև 5 տարեկան երեխաների մանկամահացության ցուցանիշը կրճատվեց 3 անգամ:

Տնտեսական այս հաջողությունը պայմանավորող գործոններից ամենաեականը թերևս

թեթև արդյունաբերության բուռն զարգացումն էր, ինչը դարձավ նաև բազմաթիվ աշխատատեղերի ստեղծման պատճառ:

Ներկայումս Բանգլադեշը միայն Չինաստանին է զիջում պատրաստի զգեստների արտադրության ոլորտում: Բանգլադեշը հասավ այսպիսի արդյունքների չնայած այն հանգամանքին, որ բնակչությունը բավական խիտ էր տեղաբաշխված և չափազանց բարդ էր լուծել վերջիններիս զբաղվածության խնդիրը:

Ըստ Բանգլադեշի պաշտոնատար անձանցից մեկի՝ «*Աղքատությունը կարելի է հաղթահարել, եթե կառավարությունն աշխատի տնտեսական ոլորտների մի քանի առաջնահերթություններով և հավատարիմ մնա նախնական նպատակներին*»:

Ինչպես նկատում ենք, Բանգլադեշի տնտեսական հաջողության հիմքում դրված է մի քանի ուղղությունների զարգացման մարտահրավեր. թեթև արդյունաբերության զարգացում, արևային էներգիայի օգտագործում, ժամանակակից գործարանների շահագործում և նորարակական տեխնոլոգիաների կիրառում. սա է Բանգլադեշի տնտեսական վերելքի գաղտնիքը:

Դեռ 1971 թվականին Բանգլադեշը պատերազմական երկիր էր, ինչի հետևանքով գոհվեց ավելի քան 3 միլիոն մարդ, և բնակչության 70%-ը դարձավ աղքատ:

Նախկինում Բանգլադեշի տնտեսությունը պահող միակ ճյուղը գյուղատնտեսությունն էր, այն էլ առանց տեխնիկայի և գործիքների աշխատանք էր տարվում, սակայն ներկայումս անգամ ամենախույլ գյուղում առկա են հողը վարող նորարակական վերջին տեխնոլոգիաները: Բանգլադեշի՝ աղքատության հաղթահարման ամենամեծ գործոնը Բանգլադեշի ժողովրդի մտածելակերպի փոփոխությունն էր: Կանանց իրավունքների պաշտպանությունն ու հասարակությունում հարգանքի անը նպաստեց նրանց աշխատատեղով ապահովելուն: Կրթության, առողջապահության համակարգերի առաջանցիկ զարգացումը ևս մեծ խթան դարձավ աղքատության մակարդակի կրճատման համար:

«*Կրթության իրավունք պետք է ունենան բոլոր քաղաքացիները*» գաղափարն ընկած է Բանգլադեշի տնտեսական վերելքի հիմքում: Այսօր Բանգլադեշում երեխաների 99%-ը ստանում է կրթություն: Միջնակարգ կրթության ցուցանիշները ոչ շատ բարձր են, ոչ էլ շատ ցածր, սակայն կրթությունը, որպես աղքատության հաղթահարման գործիք դրվել է և դրվում Բանգլադեշի սոցիալական քաղաքականության հիմքում:

Մեկ այլ գործոն, որն ընկած է Բանգլադեշի տնտեսական զարթոնքի հիմքում. շինարարության ոլորտում շեշտը դրվեց հանրային

նշանակության ճանապարհների կառուցման վրա, որոնք կապում էին գյուղերը մոտակա քաղաքների հետ: Այս գործոնը խաղաց որոշիչ դեր աղքատության նվազեցման գործում, քանի որ մարդիկ հնարավորություն ստացան հեշտությամբ գնալ քաղաքներ և արտերկիր, աշխատել և գումար ուղարկել իրենց ընտանիքներին: 2015 թվականի տվյալներով օտարերկրյա տրանսֆերտները կազմում էին ՀՆԱ-ի շուրջ 7%-ը [1]:

Աղջիկները հնարավորություն ստացան տղաներին հավասար կրթություն ստանալ, կանայք ստացան աշխատանքի իրավունք, ուրբանիզացիայի մակարդակը բարձրացավ, ամբողջ երկիրն իր տարածաշրջաններով ապահովվեց էլեկտրաէներգիայով: Ինչպես տեսնում ենք երկիրն իրոք մի քանի ուղղություններով տնտեսապես զարգացավ:

Ռահմուտի խոսքերով՝ «2024 թվականին աղքատությունն ամբողջապես կհաղթահարվի Բանգլադեշում»: Եվ իրոք, եթե երկիրը շարունակի ապահովվել աղքատության նվազեցման առաջանցիկ տեմպեր, հնարավոր է Ռահմուտի կանխատեսումն իրականություն դառնա:

Դիտարկենք Բրազիլիայի փորձը, որն ամբողջ աշխարհում աղքատության մակարդակն առաջանցիկ տեմպերով նվազեցրած երկրների հնգյակում է: Ի տարբերություն Բանգլադեշի, որտեղ հիմնական շեշտադրումը եղավ գործարանների շահագործման, կանանց դերի և ուրբանիզացիայի մակարդակի բարձրացման վրա, այստեղ որպես աղքատության հաղթահարման հիմնական միջոց ընտրվեց սոցիալական աջակցության գործիքների օգտագործումը: Խոսքը վերաբերում է Բրազիլիայում իրագործված «Bolsa Familia» ծրագրին: Այս արտահայտությունը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է «ընտանեկան դրամապանակ»:

«Bolsa Familia»-ն համարվում է ամբողջ աշխարհում երբևիցե իրականացված ամենաընդգրկուն սոցիալական ծրագիրը: Այս ծրագիրն իրենից ներկայացնում է բացառապես ընտանեկան նպաստների տրամադրում միայն այն աղքատ տնային տնտեսություններին, որոնք ունենին դպրոցահասակ երեխա: Ծրագրի տրամադրման պայման էր նաև երեխաների պատվաստումը, ինչը ենթադրում էր առողջապահական բարեփոխումների իրականացում ևս:

Հատկանշական էր, որ «Bolsa Familia» ծրագրի իրականացման ժամանակ Բրազիլիայի նախկին նախագահ Լուլա դա Սիլվան իրականացնում էր պետական բյուջեի միջոցների տնտեսում տնտեսության համարյա բոլոր ոլորտներում, բացի սոցիալականից, ինչի արդյունքը եղավ այն, որ 2003 թվականից ի վեր Բրազիլիայում աղքատության ճիրաններից

փրկվեց ավելի քան 25 միլիոն մարդ [2]: Տոկոսային հարաբերությամբ այս ծրագրի շնորհիվ երկրում աղքատության մակարդակը նվազեցվեց ավելի քան 25%-ով: Բացի վերը թվարկված առավելություններից, որն ընձեռել է այս ծրագիրը, այն նաև զգալիորեն մեծացրել է դպրոց հաճախելիությունը, ինչը ևս մեծ ներդրում է «կրթությունը որպես աղքատության հաղթահարման գործիք» համատեքստում: Այս ծրագրի շահառուները կազմել են երկրի ողջ բնակչության 11%-ը: Բրազիլիայի փորձն այնքան հաջողված էր, որ հետագայում որոշակի ձևափոխություններով կիրառվեց նաև Մեքսիկայում: Հիմնական տարբերությունն այն էր, որ այստեղ նպաստի տրամադրման հիմնական պայմանը միայնակ մոր կարգավիճակն էր: Այստեղ ևս նպաստի տրամադրման պարտադիր պայման էր դպրոց հաճախելիությունը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Չիլիի փորձը: Լատինական Ամերիկայի երկրների շարքում բավական տպավորիչ է Չիլիի՝ աղքատության մակարդակի նվազեցման ցուցանիշը: Վերջին 20 տարիների ընթացքում այս երկրում աղքատության մակարդակը 47%-ից նվազել է մինչև 20%: Նախ՝ Չիլիի կառավարությունն ընտրեց «արտահանումը որպես աղքատության հաղթահարման միջոց» կարգախոսը և սա հանգեցրեց նրան, որ ներկայումս Չիլիում արտադրվող արդյունաբերական արտադրանքի 35%-ն արտահանվում է արտերկիր: Սա բավական մեծ խթան էր երկրում տնտեսական ան գրանցելու տեսանկյունից և արդյունքը եղավ այն, որ 1990-ական թվականներից ի վեր Չիլիի պետական բյուջեն եղել է առանց պակասուրդի: Բազմաթիվ տնտեսագետների կարծիքով, Չիլիի տնտեսական զարգացման և աղքատության մակարդակի նվազեցման հիմքում ընկած է տնտեսական զարգացման ճիշտ մոդել ընտրելու հանգամանքը: Չիլիի տնտեսության զարգացման հիմնական պատճառն այն է, որ նրանց հաջողվել է լուծել հետևյալ երեք խնդիրները՝ նախ ստեղծել իշխանության արդյունավետ և վստահելի կառավարման մարմիններ, ապա հստակ պատկերացում կազմել, թե իրենք ներկա պահին որտեղ են և ուր են ուզում հասնել և որ, թերևս ամենակարևորն է, հստակ կերպով որոշել երկրաբաժանվետ հեռանկարում երկրի զարգացման ռազմավարությունը:

Հաջորդ կարևոր բարեփոխումը, որը Չիլիում վճռորոշ դեր խաղաց աղքատության և գործազրկության մակարդակների նվազեցման գործում, սակագնային տուրքերի նվազեցումն էր, որոնք այժմ չեն գերազանցում 2.6%-ը: Բնական է, որ առաջին հայացքից թվում է, որ սա պետական բյուջեի մուտքերի նվազեցում է ենթադրում, սակայն իրականում նվազեցնելով

սակագնային տուրքերը, Չիլիի կառավարությունն առաջանցիկ տեմպերով զարկ տվեց արտադրության ընդլայնմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանն ու տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովմանը: Մակրոտնտեսական կայունությունը, հարկային պարզ և հստակ համակարգը, ինչպես նաև արտաքին պետությունների համար երկրի տնտեսության բաց լինելը նպաստավոր պայմաններ են ստեղծում օտարերկրյա կապիտալի ներհոսքի և ուղղակի ներդրումների համար, ինչը տնտեսական աճ ապահովելու կարևորագույն նախադրյալներից է:

Բավական հետաքրքրական են Չիլիի կենսաթոշակային համակարգի բարեփոխումները: 1981 թվականից սկսած այն անձիք, ովքեր ցանկանում էին հրաժարվել կենսաթոշակային հին համակարգից, պետք է սկսեին պարբերաբար ներդրումներ կատարել անհատական կենսաթոշակային հաշիվներում, որով և հետագայում կֆինանսավորվեին աշխատողների կենսաթոշակները, երբ նրանք անցնեին կենսաթոշակի [3]: Հատկանշական է, որ սա ենթադրում էր պետական բեռի թեթևացում և այս գործառույթի փոխանցում մասնավոր հիմնադրամներին: Դա էլ նշենք, որ սա կամավոր բնույթ էր կրում և քաղաքացին ինքն էր որոշում վստահել մասնավոր հիմնադրամներին, թե նախկինի պես պետությանը: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ անհատական կենսաթոշակային համակարգը արդյունավետ է միայն այն անձանց համար, ովքեր ունեն կայուն աշխատանք և ճիշտ ժամանակին իրականացնում են կենսաթոշակային հատկացումները:

Չիլիի փորձը ցույց տվեց, որ զարգացման ճիշտ հեռանկար ընտրելով հնարավոր է հասնել հաջողության, այն էլ տարեկան առնվազն 6% տնտեսական աճ ապահովելով:

Աղքատության մակարդակի նվազեցման, տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովման և բնակչության կյանքի որակի բարձրացման տեսանկյունից կարևորվում է Մինգապուրի փորձը: 1965 թվականին՝ երկրի անկախացման պահին, այն համարվում էր փոքր և աղքատ երկիր, իսկ այժմ սինգապուրյան տնտեսական հրաշքի շնորհիվ երկիրը դարձել է համաշխարհային ամենախոշոր նավահանգիստներից և նավթամշակման կենտրոններից մեկը:

Անդրադառնանք Մինգապուրի տնտեսական հրաշքին, որը վերաբերվում է երկրի ներքին և արտաքին կյանքի գրեթե բոլոր ոլորտներին: Մինգապուրի տնտեսության ծաղկման հիմնական պատճառը ամենից առաջ գրագետ իրականացված տնտեսական քաղաքականությունն էր: Այն իր մեջ ներառում էր օտարերկրյա ներդրումների իրագործումը, ՓՄՁ ոլորտին պետության կողմից զանազան արտոնություն-

ների տրամադրումը, ազատ տնտեսական գոտիների ստեղծումը և այլն [4]: Եվ այս ամենը նախևառաջ հարկային ցածր դրույքաչափեր սահմանելով:

Մինգապուրն ունի կայուն քաղաքական և իրավական համակարգ, ինչը երկիրն ավելի գրավիչ է դարձնում օտարերկրյա ներդրումներ ներգրավելու տեսանկյունից: Պատահական չէ, որ աշխարհի բազմաթիվ առաջավոր տնտեսագետներ Մինգապուրը համարում են իդեալական երկիր բիզնես հիմնելու և հետագայում զարգացնելու համար: Այդ է պատճառը, որ բնակիչների մեծամասնությունը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեության իրականացման մեջ:

Մինգապուրի տնտեսական հրաշքի գաղտնիքներից մեկն այն է, որն կառավարությանը հաջողվեց արդյունավետ կերպով պայքարել կոռուպցիայի դեմ: Մասնավորապես ընդունվեց օրենք, համաձայն որի, եթե պաշտոնյան ձեռք է բերում իր եկամուտներին ոչ համապատասխան գույք, նա պարտավոր է դատարանում բաց և հրապարակային ձևով ապացուցել իր եկամուտների օրինականությունը:

Ըստ Մինգապուրի տնտեսական հրաշքն իրականացրած պետական պաշտոնյաների, պետք չէ սպասել օտարերկրյա վարկերին և օգնություններին, պետք է փորձել ապավինել սեփական ուժերին, այսինքն ոչ թե պատրաստի ձուկ ստանալ, այլ սովորել ձուկ որսալ:

Մինգապուրի տնտեսական հաջողության հիմքում ընկած էր բյուրոկրատական արարողակարգերի հնարավորինս պարզեցումը: Երկրում հիմնվեց Տնտեսական զարգացման գործակալություն, որն առավելագույն արագությամբ հետազոտում էր բոլոր նախաձեռնությունները: Կառավարությունը ուշիուշով հետևում էր Համաշխարհային տնտեսությունում իրականացվող բոլոր փոփոխություններին և նորարարական և հեռանկարային գաղափարներն անմիջապես ներդնում էր երկրում: Պետական կառավարման համակարգը զարգանում էր առավել դինամիկ կերպով, քան մասնավորն էր: Օրենքի չափանշանը խստությունը ազդում էր Մինգապուրի բոլոր քաղաքացիների վրա անխտիր: Փողոցում հաց ուտելու կամ ուտելիքի, մաստակի կամ ծխախոտի մնացորդ փողոց նետելու համար քաղաքացին պարտավոր էր վճարել 1000 դոլար տուգանք: Պատահական չէ, որ Մինգապուրի տնտեսական հրաշքն իրականացրած վարչապետ Լի Կուան Յուին շատերն անվանում էին «մեղմաբար բռնապետ», ըստ այդմ էլ երկիրն անվանում են «մեղմ ավտորիտարիզմ»: Երկրի կառավարման համակարգում ըստ էության բացառվում է ընդդիմության գոյությունը, քանի որ երկրում հաստատված է միակուսակցական համակարգ:

2015 թվականի տվյալներով Մինգապուրում առկա է մինչև 30 տարեկան բնակչության 5% գործազրկության մակարդակ: Հատկանշական է, որ երկրում գոյություն չունի նվազագույն աշխատավարձ հասկացությունը և գործատուներն ու աշխատանք փնտրողներն իրենք են համաձայնության գալիս աշխատավարձի դրույթաչափի շուրջ:

1960-1970-ական թվականներին լուրջ բարեփոխումներ տեղի ունեցան կրթության ոլորտում: Անգլերենը դարձել էր պարտադիր ուսուցման առարկա բոլոր ոլորտներում և բոլոր համալսարաններում դասապրոցեսներն իրականացվում էին անգլերենով:

Նշենք Մինգապուրում կրթական համակարգի բարեփոխում ևս. կրթության դերն ավելի բարձրացնելու նպատակով վարչապետը որոշում է հատուցում տրամադրել բոլոր այն տղամարդկանց, ովքեր ամուսնանում են դիպլոմ ունեցող կանանց հետ, իսկ դիպլոմ չունեցող յուրաքանչյուր կին երկրորդ երեխան ունենալիս պետք է տուգանք վճարի պետությանը:

Այդ նույն թվականներին Կառավարության հիմնական խնդիրն էր բնակչության մեծամասնությանը բնակարանով ապահովելը: Երկրում ներդրվեց հիպոտեքային վարկավորված համակարգը, կտրուկ ան գրանցեց բնակարանային շինարարությունը: Արդյունքն եղավ այն, որ 1996 թվականին բնակարանների ընդամենը 9%-ն էր վարձով տրվում, իսկ մնացած մասը զբաղված էր սեփականատերերի կողմից:

Հանցագործության ցածր մակարդակը երկրում պայմանավորված է խիստ դատավճիռներով: Մինչ այժմ երկրում գոյություն ունի կախաղանի միջոցով մարդուն մահվան դատապարտում, ինչպես նաև պատիժ մտրակի միջոցով:

Ինչպես տեսնում ենք, համառ կերպով իրականացնելով ընտրված ռազմավարությունն ու խիստ միջոցներ, օրենքի գերակայություն հաստատելով երկրում, Մինգապուրին հաջողվեց կարճ ժամանակահատվածում դառնալ աշխարհի ամենաազդեցիկ երկրներից մեկը:

Եզրակացություններ:

Այսպիսով՝ ուսունասիրելով աղքատության և գործազրկության հաղթահարման տարբեր երկրների փորձեր, որոնք ինչպես տեսանք, տարբեր էին յուրաքանչյուր երկրի համար՝ պայմանավորված երկրի բնակչության առանձնահատկություններով, տնտեսական համակարգի յուրահատկություններով և կառավարման համակարգերի տարբերություններով: Հայաստանի Հանրապետությունում այս երկրների հաջողությունը պայմանավորող գործոնների ներդրումը պահանջում է յուրաքանչյուր ոլորտի մանրակրկիտ հետազոտություն և համադրելիության հետևանքների կանխատեսում, այլապես ինչ-որ երկրի փորձի անարդյունավետ ներդրումը կարող է ոչ միայն չօգնել աղքատության և գործազրկության մակարդակների նվազեցման գործում, այլ նաև լուրջ վնասներ հասցնել երկրի տնտեսությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Համաշխարհային բակի պաշտոնական կայքից <http://www.vsemirnyjbank.org/ru/news/feature/2016/10/14/rising-bangladesh-brings-hope-ambition-and-innovation-to-end-poverty> (մուտք 09.05.2023)
2. Հանրային ազդեցության կենտրոնի պաշտոնական կայքից <https://www.centreforpublicimpact.org/casestudy/bolsa-familia-in-brazil/> (մուտք 12.05.2023)
3. Հարվարդի բիզնես կրթություն պաշտոնական կայքից Chile: The Latin American Tiger, Harvard Business School. March 21, 1999 (մուտք 13.05.2023)
4. **Krugman, Paul** The Myth of Asia's miracle, <http://vault.hanover.edu/~eiriksson/classes/214/files/MythOfAsiasMiraclePaulKrugman.pdf> (մուտք 13.05.2023)

Տճանա/Հանձնվել է՝ 15.05.2023
 Рецензирована/Գրախոսվել է՝ 22.05.2023
 Принята/Ընդունվել է՝ 02.06.2023